ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ РЕЦЕНЗИИ

А. Д. ПАПАЗЯН, *Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII вв.*, Ереван, 1972, 302 стр., цена 1 р. 81 к.

Մեր պատմագիտական գրականության մեջ Արևելյան Հայաստանի հողային հարաբերությունների մասին կան մի շարք աշխատություններ։ Սակայն ցայսօր թերի էր ուսումնասիրված այդ հարաբերությունների պատմությունը XVI—XVII դդ.։ Այդ բացը լրացրեց պատմական գիտությունների դոկտոր Հ. Դ. Փափազյանը՝ իր «Հողային հարաբերությունները Արևելյան Հայաստանում XVI—XVII դդ.» աշխատությամբ։ Տիրապետելով արևելյան ու եվրոպական մի քանի լեզուների և խորապես ուսումնասիրելով թեմայի աղբյուրներն ու գրականությունը, Փափազյանը կարողացել է հաղթահարել իր առջև կանգնած բազմաթիվ դժվարությունները և գիտականորեն շարադրել Արևելյան Հայաստանի նշված ժամանակաշրջանի հողային հարաբերությունների պատմությունը։

Հեղինակը նախապես բնութագրում է իր թեմայի աղբյուրները, տարբերում արժանահավատը անարժանահավատից, առաջնայինը՝ երկրորդականից, ապա անցնում է գրականությանը և, գնահատելով իր նախորդների կատարած աշխատանքը, նշում, որ սովետական հետազոտողների ջանքերով արդեն լուծված են Արևելյան Հայաստանի XVI—XVII դդ. հողային հարաբերությունների բազմաթիվ պրոբլեմներ։ Շարունակելով խորացնել այդ պրոբլեմների ուսումնասիրությունը, նա առաջ է քաշում ու լուսաբանում այնպիսի խնդիրներ, որոնք տակավին մնացել էին ստվերում։ Հ. Փափազյանը ընթերցողին ներկայացնում է նաև իր թեմայի կապակցությամբ արտասահմանյան պատմագրության զարգացման մակարդակը։

Պատմագիտական զգալի հետաքրքրություն է ներկայացնում գրախոսվող գրքի այն բաժինը, ուր բնութագրվում է Արևելյան Հայաստանի դրությունը Սեֆյանների տիրապետության ժամանակաշրջանում։ Հեղինակը ցույց է տալիս, որ XV—XVI դդ. հայ ֆեոդալական տների մեծ մասը, կորցնելով իր հողային տիրությունները, դուրս մղվեց նաև բաղաքական ասպարեզից. ոմանք իրենց անձը և ունեցվածքը փրկելու համար մահմեդականություն ընդունեցին, մյուսները սկսեցին զբաղվել առևտրով, իսկ երրորդները՝ դիմագրավեցին և ընկան անհավասար մարտերում։ Խոշոր հողատիրությունից հայ իրականության մեջ հարատևեց միայն վանական կալվածատիրությունը։ Հեղինակի այս ամփոփումը, հանդիսանալով նախորդ հետազոտողների ընդհանրացումների հաստատումը, կարևոր նշանակություն ունի ոչ միայն արևելյան հողային հարաբերությունների, այլև ազատագրական շարժումների ուսումնասիրման համար։

Հ. Փափազյանը նշում է, որ հայ ֆեոդալներից բռնագրավված հողերը օտար տիրակալների կողմից պետականացվեցին և մտցվեցին «բեյթ-ալ»։ տիրույթների շարքը, այսինքն՝ այնպիսի տիրույթների, որոնց գերագույն սեփականատերը հանդիսանում է պետությունը։ Միայն ամիրի կամ շահի թույլտվությամբ դրանք կարող էին օտարվել և անցնել այս ու այն անհատի ձեռքը (էջ 78—79)։ Սակայն, իրավացիորեն եզրակացնում է հեղինակը, դա չի նշանակում, որ Արևելյան Հայաստանում վերացավ մասնավոր ֆեոդալական հողատիրությունը։ Ընդհակառակը, XVI—XVII դդ. այն լայն տարածում ընդունեց և դրսևորվեց ամենից առաջ ոչ պայմանական կամ մուլքային հողատիրության ձևով (էջ 82—83)։ Այդ հողատիրությունը բնութագրվում էր նրանով, որ տերը անկաշկանդ կարող էր ժառանգել, նվիրել կամ վաճառել իր տիրույթը։

Մերժելով Ս. Մարկոսյանի և այլոց այն տեսակետը, թե մուլքադարը կամ մալիքը իբրև սեփականատեր հանդես էր գալիս միայն ռենտայի նկատմամբ, Հ. Փափազյանը արխիվային բազմաթիվ փաստերով ցույց է տալիս, որ ինչպես Իրանի այլ շրջաններում, այնպես էլ Արևելյան Հայաստանում հողի գերագույն սեփականատերը իրավապես թեև պետությունն էր, սակայն փաստորեն հողը գտնվում էր ֆեոդալ-մալիքների ձեռքում, որոնք իրացնում էին սեփականատիրոջ բոլոր իրավունքները։ Բանն այնտեղ էր հասնում, որ մալիքները հաճախ ձգտում էին օրենսդրությամբ ձևակերպել իրենց սեփականատիրական արտոնությունները (էջ 85)։ Հեղինակի այս հետևությունը համոզիչ է և հնարավորություն է տալիս հասկանալու նաև ռենտայի հարցերը։ Արդարև, ինչպես կարող է մալիքը կամ մուլքադարը, չլինելով հողի ֆեոդալական սեփականատեր, ստանալ ֆեոդալական ռենտա կամ հարկ-ռենտա։ Չէ որ ռենտան ոչ

այլ ինչ է, բայց եթե ֆեոդալական հողային սեփականության տնտեսական իրացումը։ Խորանալով իր պրպտումների մեջ, հեղինակը դալիս է այն հետևության, որ մուլքային հողատեսակներից ամենակայուն սեփականություն էին հանդիսանում հատկապես այն հանդակները, որոնց ձեռք էին բերված ժառանգման ու գնման ճանապարհներով (էջ 91)։

Մուլքային հողատիրության բնութագրումից հետո Հ. Փափազյանն անցնում է պետական հողատիրությանը և ցույց է տալիս, որ վերջինս XVII դ. կազմում էր Արևելյան Հայաստանի մշակելի հողատարածության 50 տոկոսը։ Հողատիրության այդ տեսակը, որ կոչվում էր դիվանի, ընդարձակվեց հատկապես հայ բնակչության հողերի և մուլքային որոշ տիրույթների հափշտակման հաշվին։ Փաստական հարուստ նյութերով հեղինակը ապացուցում է, որ իրանական պետությունը այդ հողերը տալիս էր իր ռազմական ավագանուն և պաշտոնյաներին՝ իբրև վարձատրություն նրանց ծառայության դիմաց։ Դրա հետևանքով Արևելյան Հայաստանում առաջանում է ֆեոդալական հողատիրության նաև մի այլ ձև, որը կոչվում էր թիուլային հողատիրություն։ Ի տարբերություն մուլքի, որը ոչ պայմանական, ժառանգական էր, թիուլը պայմանական, ցմահ հողատիրություն էր։ Թիուլային տիրույթները պետք է պատկաններին պետական ու զինվորական անձանց այնքան ժամանակ, քանի դեռ նրանք գտնվում էին ծառայության մեջ, որից հետո կարող էին տրվել ուրիշներին։

Սկզբնական շրջանում թիուլդարը բավարարվում էր իր իրավասության տակ գտնվող բնակչությունից հավաքած հարկ-ռենտայի՝ պետության կողմից որոշված բաժնի ստացումով միայն։ Բայց հետագայում նա ձգտում էր սեփականացնել իր կառավարմանը հանձնված տարածությունը և մի շարք դեպքերում հասնում էր դրան։ Օգտվելով պետության թուլությունից, թիուլդարներն ավելի շեշտված էին իրացնում իրենց վարչական ու դատական ֆունկցիաները և տիրույթները դարձնում էին ժառանգական (էջ 101)։ Ուշագրավ են հեղինակի այն դիտումները, որ թիուլային տիրույթներում գյուղացիների վիճակը ավելի ծանր էր, քան մուլքային, քանի որ թիուլդարը իրագործում էր նաև վարչական իրավունքը։ Սա ցույց է տալիս, որ պետության անունով հավաքված հարկ-ռենտայի մեծ մասը յուրացվում էր թիուլդարների և այլ ծառայողների կողմից, սակայն կային և այնպիսի տարածություններ, որոնցից ստացված հարկերն ու եկամուտները գնում էին միայն տեղական իշխանությունների օգտին։ Այդ տարածությունները կոչվում էին խալիսա, որ բառացի նշանակում է մաքուր, ամրողջ, չխառնված (էջ 106)։ Նման տարածությունները Արևելյան Հայաստանում ընդգրկում էին ամենաբարձրեր շրջանները և քիչ էին, քանի որ սահմանային երկիր լինելով Արևելյան Հայաստանը կարող էր հաճախակի ենթարկվել արտաքին հարձակումների։

Հ. Փափազյանը վերլուծում է ֆեոդալական հողատիրության նաև մի այլ ձևը՝ վանական-եկեղեցական կամ վակֆային հողատիրությունը։ Նա ցույց է տալիս, որ IV դ. սկսած հայկական եկեղեցին ձեռք էր բերել հողային ընդարձակ տարածություններ։ Սակայն XIV—XV դդ., երբ կործանվեցին հայկական իշխանությունները, հայ եկեղեցական հողատիրությունը ճնշման է ենթարկվում օտարերկրյա նվաճողների կողմից։ Այնուամենայնիվ XVI—XVII դդ. եկեղեցին Արևելյան Հայաստանում դեռ շարունակում էր տիրել ընդարձակ հողերի ու տասնյակ գյուղերի և դրանց մի մասին տիրում էր մուլքի սկզբունքներով, պետությանը հարկ վճարելով։ Սակայն իր գյուղերի մյուս մասին եկեղեցին տիրում էր վակֆի սկզբունքով. այդ գյուղերը ազատ էին պետական հարկերից, դրանցից ստացված եկամուտները պետք է ծառայեին սոսկ այն նպատակներին, ինչ նպատակներով այդ գյուղերն ու հողերը նվիրվել էին վանքին։ Հեղինակը անդրադառնում է վանքապատկան հողերի վաճառքին կամ գրավին և ապացուցում, որ իբրև կանոն մուլքային տարածությունները՝ կարող էին, իսկ վակֆայինները՝ չէին կարող ներքաշվել նման գործարքների մեջ։ Սակայն բացառիկ դեպքերում վակֆային հողերը նույնպես կարող էին վաճառվել կամ գրավ դրվել։

Հ. Փափազյանը լուսաբանում է նաև մեր պատմագիտության մեջ քիչ ուսումնասիրված մի այլ հարց, այն է՝ արդյոք էջմիածինը պետությանը հարկեր վճարո՞ւմ էր։ Պատմական կոնկրետ փաստերով նա ապացուցում է, որ XV—XVI դդ. այն ազատ էր պետական հարկերից, սակայն XVII դ. արդեն ծանրաբեռնվում է դրանցով (էջ 141—142)։ Նման կացություն է ապրում նաև հայ հողևորականությունը։

Վերլուծելով հողատիրության ձևերը, հեղինակը ի հայտ է բերում նաև «հայրենիքը», որը ձևավորվելով դեռ վաղ անցյալում (հավանական է VII—VIII դդ.), շարունակում է գոյատևել նաև XVI—XVII դդ., սակայն արդեն իբրև մուլքային հողերի տարատեսակներից մեկը (էջ 152—155)։ Ապա նա նկատում է, որ չնայած նվաճողների գործադրած բռնություններին, Արևելյան Հայաստանում այնուամենայնիվ գոնվեցին առանձին գյուղական համայնքներ, որոնք իրենց համառ դիմադրության շնորհիվ պահպանեցին ինքնուրույնությունը՝ ընդհուպ մինչև XVIII դ. (էջ 194)։

Գրախոսվող աշխատության մեջ մեծ տեղ է հատկացվում Արևելյան Հայաստանի գյուղա-

դիության դրության հարցերին։ Հեղինակը ամենից առաջ անդրադառնում է գյուղացիների հողին ամրակցման պրոբլեմին և նշում, որ մինչհեղափոխական կովկասագետների մեծ մասը, նկատի ունենալով շարիաթի դոգմաները, գտնում է, որ Իրանում (այդ թվում նաև Արևելյան Հայաստանում) գոյություն չի ունեցել գյուղացիների ամրակցում հողին, որ նրանք անկաշկանդ տեղաշարժվել են։ Զրաժանելով այդ տեսակետը, հեղինակը նորահայտ փաստերով ամրապնդում է պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկու այն եզրակացությունը, որ Սեֆյանների տիրապետության ժամանակ գյուղացիները չէին կարող ազատ կերպով փոխել իրենց բնակության վայրերը (էջ 209)։

Փափազյանը նշում է, որ իլխանական շրջանում, այսինքն՝ XIII—XIV դդ., գյուղացիները ամրակցված էին հողին և զրկված տեղաշարժերի իրավունքից։ Նա, անշուշտ, նկատի ունի Ղազան խանի այն հանրահայտ հրովարտակները, որոնք հայտարարում էին, որ եթե ռայաթները հեռանան իրենց բնակած վայրերից, ապա 30 տարվա ընթացքում նրանց կարելի է ետ բերել։ Այդ պրակտիկան թեպետև պաշտոնապես վերացել էր, սակայն իրականում շարունակում էր գործել նաև հետագա՝ XV—XVIII դդ. (էջ 210)։ Հավանաբար այդ իրական փաստի հիման վրա էր, որ Սուլթան-Հյուսեին շահը 1710 թ. հրահանգ արձակեց, որի համաձայն 12 տարվա ընթացքում կարելի էր ետ վերադարձնել իրենց հին բնակավայրերից փախած ռայաթներին։ Այդպիսով, եզրափակում է հեղինակը, եթե իլխանական շրջանում փախած գյուղացիներին վերադարձնելու իրավունքը ուժի մեջ էր 30 տարի, ապա Սեֆյանների շրջանում՝ 12 տարի (էջ 212), և հողատերերը, հատկապես թիուլդարները, հաջողությամբ օգտվում էին այդ օրենքից։

Հ. Փափազյանը այնուհետև ցույց է տալիս արևելահայ գյուղացիության հարստահարումը իրանական պետության, կալվածատերերի և տեղական հոգևորականության կողմից։ Նա մանրամասն թվարկում և բնութագրում է այն հարկերն ու պարհակները, ֆեոդալական renտայի տեսակները, որոնք բնակչությունից գանձվում էին իշխող խավերի կողմից։ Ապա իրավացիորեն նշում է, որ գյուղացիության համար որքան ծանր էին հարկային հարստահարումները, այնքան էլ անտանելի էին այդ հարստահարումների ժամանակ գործադրած բռնություններն ու չարաշահումները։ Նման պայմաններում տեղի էր ունենում բնակչության մասսայական աղքատացում, որը իր բացասական ազդեցությունն էր թողնում արտադրողական ուժերի զարգացման վրա։ Աշխատության այս բաժինը արժեքավոր է ոչ միայն նրանով, որ հեղինակը հիշատակում է հարկատեսակներն ու նրանց չափերը ու երբեմն է բերում հարկային այնպիսի տերմիններ, որոնք մինչև այժմ անհայտ էին, այլև նրանով, որ տալիս է դրանց լեզվաբանական մեկնաբանությունները։

Հ. Փափազյանի աշխատությունը, անշուշտ, արժեքավոր ուսումնասիրություն է։ Այն գրված է բազմաթիվ աղբյուրների ու նորահայտ նյութերի հիման վրա՝ գիտական բարձր մակարդակով։ Տասնամյակներ շարունակ զբաղվելով մայրենի և այլալեզու (գերազանցապես պարսկական) տեքստերի ուսումնասիրությամբ և հրատարակելով պատմական գիտության համար լուրջ արժեք ներկայացնող նյութերի ու փաստաթղթերի ժողովածուներ, նա հմտորեն օգտագործել է դրանք և ստեղծել մի գիրք, որը բավարար պատկերացում է տալիս Արևելյան Հայաստանի XVI—XVII դդ. հողային հարաբերությունների մասին։ Պիտի ցանկանալ, որ հեղինակը նույն ջանասիրությամբ շարունակի իր պրպտումները և փորձի լուսաբանել նաև Արևելյան Հայաստանի XVIII դարի և XIX դ. առաջին քառորդի հողային հարաբերությունների պատմությունը։

Հ. Փափազյանի աշխատությունն ունի մասնակի թերություններ։ Այսպես, նա քիչ է խոսում գյուղացիական շարժումների մասին, շոշափում է դրանք դրքի տարբեր բաժիններում։ Մինչդեռ այդ շարժումները պետք է լուսաբանվեին հատուկ գլխում։ Հեղինակը հակասության մեջ է ճորտատիրության հարցում. մի կողմից նա փաստերով ցույց է տալիս ճորտատիրության հիմնական հատկանիշների առկայությունը Արևելյան Հայաստանում, այն է՝ գյուղացիների հողին ամրակցումը, տեղաշարժերի արգելակումը, կալվածատերերի վարչա-դատական իրավունքները նրանց նկատմամբ և այլն, իսկ մյուս կողմից հայտարարում է, որ XVII դ. Արևելյան Հայաստանի ռայաթները իրենց կալվածատերերի ճորտերը չէին (էջ 209)։ Փափազյանի դրքում հիշատակվում են բազմաթիվ սոցիալական տերմիններ, որոնք մեկնաբանվում են համապատասխան տեղում, սակայն ավելի լավ կլիներ, եթե աշխատության վերջում բերվեր այդ տերմինների հատուկ բառարան։ Դա զգալի չափով կհեշտացներ ընթերցողի գործը։

Այս մասնակի թերությունները չեն նսեմացնում դրախոսվող աշխատության արժեքը։ Ցանկալի է, որ դիրքը թարգմանվի հայերեն։

Պատմ. գիտ. դոկտոր Ա. ՀԱՄԲԱՐՅԱՆ